

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «06» հուլիսի 2021թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է **«ՀՀ կենտրոնական բանկի 3-րդ մասնաշենքի վերնահարկի շինարարական աշխատանքների որակի տեսչական հսկողության խորհրդարարական ծառայություն մատուցող կազմակերպության գնանշման հարցման»** ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ամփոփ տեղեկատվությունը: Մրցույթին մասնակցել է երկու կազմակերպություն՝

1. **«ՏԵԽ-ՇԻՆ 2020» ՍՊԸ**
2. **«ՊԱՐԱՊԵՏ» ՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «06» հուլիսի 2021թ. նիստի ընթացքում ամփոփվել են վերը նշված գնանշման հարցման արդյունքները և հաղթող մասնակից է ճանաչվել **«ՏԵԽ-ՇԻՆ 2020»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5 օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ